12.08.2021
347-90

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու բնակելի թաղամասի անմիջական հարևանությամբ գործում է քարի արտադրամաս, որը գործում է համայնքային սեփականություն հանդիսացող հողի վրա՝ անօրինական: Համայնքային հողի նշանակությունը նույնպես փոխված չէ (այն բնակելի է):

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 10.08.2021թ. թիվ 19/98733 գրությամբ Քաղաքապետարանը ԻԱԿ-ին տեղեկացել է, որ չունի անօրինական գործող քարի արտադրամասի գործունեությունը դադարեցնելու լիազորություն: Խնդրում ենք տեղեկացնել, թե որ պետական մարմնի լիազորությունն է համայնքի հողին պատկանող տարածքում անօրինական գործող արտադրամասի գործունեության կասեցումը կամ դադարեցումը:

2. Ունի՞ արդյոք քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ Ա/Ձ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը:

3. Ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն, և անգամ Հեղափոխությունից հետո՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը, համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավելի անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am